

ԿԱՆԱՆՑ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ԷՍՏՐՈՂԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ



ԵՐԲ Է ՅՈՒՑԿԱԾ ՏԵՂԱՅԻՆ ԷՍՏՐՈՂԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱՆ

Տեղային Էստրոգենային թերապիան ցուցված է հեշտոցի չորության բուժման նպատակով: Տվյալ խնդիրն առաջանում է դաշտանադադարի տարիքի կանանց շրջանում, քանի որ ձվարաններն այլևս բավարար քանակի Էստրոգեններ չեն արտադրում:

Կանայք կարող են գանգատվել սեռական հարաբերության ժամանակ այրոցի զգացողությունից, քսման հեղուկի բացակայությունից, չորությունից:

Էստրոգենների պակասի հետևանքով կարող են առաջանալ միզարձակման հետ կապված խնդիրներ՝ հաճախամիզություն, անմիզապահություն, միզուղիների բորբոքումներ:

ԻՆՉ Է ՏԵՂԱՅԻՆ ԷՍՏՐՈՂԵՆԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱՆ

Տեղային Էստրոգենային թերապիան Էստրոգենի ներհեշտոցային կիրառումն է: Այն լավացնում է հեշտոցի լորձաթաղանթի որակը՝ խոնավեցնելով այն, կարգավորելով թթվայնությունը և հաստությունը:

Տեղային թերապիայի առավելությունն այն է, որ նվազագույն չափաբաժիններով հնարավոր է ստանալ առավելագույն արդյունք և միաժամանակ նվազագույնի հասցնել Էստրոգենի ազդեցությունը կրծքագեղձերի կամ արգանդի վրա:

Հեշտոցային Էստրոգենները ներկայացված են հեշտոցային մոմիկների, քսուլքների, գելերի և Էստրոգենային օղերի ձևով:



ԱՐԴՅՈ՞Ք ՏԵՂԱՅԻՆ ՀՈՐՄՈՆԱԼ ԹԵՐԱՊԻԱՆ ԱՆԿՏԱՆԳ Է

Հեշտոցային Էստրոգենային միջոցները ազդում են տեղային՝ բարելավելով հեշտոցի պատերի և լորձաթաղանթի վիճակը:


Եթե կինն ունեցել է կրծքագեղձի քաղցկեղ և գանգատվում է հեշտոցի չորությունից, որը չի կարգավորվում հեշտոցային խոնավեցնող միջոցների կիրառմամբ (lubrigel), ապա Էստրոգենների տեղային կիրառումը համարվում է ընտրության միջոց:

Ուրոգինեկոլոգը պետք է համաձայնեցնի հեշտոցային Էստրոգենների նշանակումը ուռուցքաբանի հետ:

Ըստ հետազոտությունների տեղային Էստրոգենային թերապիան հակացուցված չէ կրծքագեղձի քաղցկեղի դեպքում:

ՈՐ ԴԵՂՈՐԱՅՔԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ

Բժիշկը կարող է որոշել, թե յուրաքանչյուր կնոջ համար տեղային Էստրոգենային միջոցներից որն է կիրառելի: Հետազոտությունները ցույց են տվել, որ բոլոր տեղային Էստրոգենային միջոցները հավասարապես արդյունավետ են փստանիշները վերացնելու համար:



մինչև դաշտանադադար դաշտանադադարից հետո

Արդյո՞ք կինն ունի տեղային Էստրոգենային թերապիայի կարիք, եթե արդեն հորմոն փոխարինող թերապիա է ընդունում:

Եթե կինն ընդունում է հորմոն փոխարինող թերապիա, բայց չարունակում է հեշտոցային չորության փստանիշներ ունենալ, ապա բժիշկը կարող է նշանակել նաև հեշտոցային Էստրոգեններ:



Սա հատկապես ընդունելի է, եթե կինը հորմոն փոխարինող թերապիայի փոքր չափաբաժին է ստանում:

Հեշտոցային քսուլքները կարող են նաև օգտակար լինել, եթե հիմնական փստանիշը հեշտոցի չորությունն է սեռական հարաբերության ժամանակ: Հեշտոցային խոնավեցնող միջոցները կարող են օգնել վերականգնել խոնավությունը և կարող են օգտագործվել մի քանի օրը մեկ անգամ՝ ըստ անհրաժեշտության:

